ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 358– Ա

ՄԱՐԻՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ «ԿԱՊԱՆԻ ԹԻՎ 4 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ, ՆՐԱ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված կարգի 39-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից ձևավորված մասնագիտական հանձնաժողովի դրական եզրակացությունը, 2026 թվականի հուլիսի 16-ի հարցազրույցի N 808 արձանագրությունը և Մ. Գրիգորյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. 2026 թվականի հուլիսի 29-ից Մարինա Գրիգորյանին նշանակել «Կապանի թիվ 4 միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն, նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

2. 2026 թվականի հուլիսի 29-ից Մարինա Գրիգորյանին ազատել Սյունիքի մարզպետի 2026 թվականի մարտի 6-ի N 89-Ա որոշմամբ նրա վրա դրված նույն կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումից:

2026-07-28 17:53:31 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2026թ. հուլիսի 28
Քաջարան